


1.2.5. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 3.1%-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-օգոստոս	2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. օգոստոս	2003թ. օգոստոսը 2003թ. հուլիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	4484.6	103.1	662.9	98.4
<i>այդ թվում՝</i>				
Երկաթուղային տրանսպորտով	1394.5	113.2	158.6	78.0
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	160.8	147.3	26.7	106.0
ներկրվել են բեռներ	603.8	96.8	81.0	87.0
ներհանրապետական փոխադրումներ	629.9	126.3	50.9	59.9
ավտոտրանսպորտով	2505.0	92.7	463.5	108.1
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	65.5	88.9	11.1	111.0
ներկրվել են բեռներ	252.1	132.5	37.3	89.0
ներհանրապետական փոխադրումներ	2187.4	89.7	415.1	110.1
օդային տրանսպորտով¹	5.5	103.8	0.8	80.0
<i>որից.</i>				
արտահանվել են բեռներ	2.2	104.8	0.4	80.0
ներկրվել են բեռներ	3.3	103.1	0.4	80.8
խողովակաշարային տրանսպորտով	579.6	141.2	40.0	99.0

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-օգոստոսին, %



2002թ. հունվար-օգոստոսին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 28.3%, ավտոմոբիլայինը՝ 62.1%, օդայինը՝ 0.1%, խողովակաշարայինը՝ 9.5%:

¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

Երկաթուղային տրանսպորտ: 2003թ. հունվար-օգոստոսին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 11.3%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 43.3% (2002թ. հունվար-օգոստոսի 50.6 %-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 11.5% (2002թ. հունվար-օգոստոսի 8.9%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 45.2% (2002թ. հունվար-օգոստոսի 40.5%-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2003թ. հունվար-օգոստոսին 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ հանքաքար գունավոր մետաղների փոխադրման ծավալն ավելացել է 2.1անգամ, ցեմենտինը՝ 9.2%-ով, հանքային շինարարական նյութերինը՝ 6.5%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 4.5%-ով, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 4.1%-ով, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 3.1%-ով: Սև մետաղների փոխադրման ծավալը նվազել է 65.8%-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 34.4%-ով, քարածխինը՝ 11.8%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 5.2%-ով:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2003թ. հունվար-օգոստոսին կազմել է 87վազոն և 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ ավելացել 14 միավորով, իսկ բեռնումը կազմել է 57 վազոն և ավելացել 13 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնատույտը կազմել է 10.8 օր և 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ դանդաղել է 2.9 օրով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի ցուցանիշի նկատմամբ նվազել է 7.3%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 10.1% (2002թ. հունվար-օգոստոսի 7.1%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 11.4% (2002թ. հունվար-օգոստոսի 9.0%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.6% (2002թ. հունվար-օգոստոսի 2.7%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 11.7% (2002թ. հունվար-օգոստոսի 7.3%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 87.3% (2002թ. հունվար-օգոստոսի 90.2%-ի դիմաց):

Օդային տրանսպորտ: 2003թ. հունվար-օգոստոսին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 3.8%-ով: Հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 60.0% (2002թ. հունվար-օգոստոսի 60.4%-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 40.0% (2002թ. հունվար-օգոստոսի 39.6%-ի դիմաց):

Խողովակաշարային տրանսպորտ: 2003թ. հունվար-օգոստոսին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի ցուցանիշի նկատմամբ աճել է 41.2%-ով:

Բեռնաշրջանառություն: 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 36.4%-ով:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների


	2003թ. հունվար-օգոստոս	2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. օգոստոս	2003թ. օգոստոսը 2003թ. հուլիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝	1182.0	136.4	102.7	92.6
Երկաթուղային տրանսպորտով	346.3	127.8	40.0	85.8
ավտոտրանսպորտով	52.1	132.2	8.3	89.2
օդային տրանսպորտով	3.7	92.5	0.5	83.3
խողովակաշարային տրանսպորտով	779.9	141.2	53.9	99.0

Ուղևորափոխադրումներ: 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի ցուցանիշի նկատմամբ աճել է 10.3%-ով:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-օգոստոս	2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. օգոստոս	2003թ. օգոստոսը 2003թ. հուլիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	112935.0	110.3	13910.9	95.1
Երկաթուղային տրանսպորտով	733.9	81.6	108.7	99.7
ավտոտրանսպորտով	96555.7	114.2	11872.4	93.5
որից՝				
թեթև մարդատար տաքսիներով	699.9	175.0	124.2	114.8
օդային տրանսպորտով ¹	602.2	109.2	124.7	134.5
էլեկտրատրանսպորտով	15034.2	91.6	1805.1	104.8

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-օգոստոսին, %



¹ Ցուցանիշներում ներառված են մաս այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:

2002թ. հունվար-օգոստոսին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.9%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 82.6%, օդային տրանսպորտինը՝ 0.5% և էլեկտրատրանսպորտինը՝ 16.0%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2003թ. հունվար-օգոստոսին կազմել է 68.2%, իսկ տրոլեյբուսով՝ 18.5%, տրամվայով՝ 10.9% և ճոպանուղով՝ 2.4%:

Ուղևորաշրջանառություն: 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 3.4%-ով:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-օգոստոս	2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. օգոստոս	2003թ. օգոստոսը 2003թ. հուլիսի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղևոր-կմ այդ թվում՝	1731.2	103.4	256.8	111.7
երկաթուղային տրանսպորտով	28.6	88.8	5.2	115.6
ավտոտրանսպորտով	1194.8	109.5	147.5	99.8
որից՝				
թեքև մարդատար տաքսիներով	4.9	175.0	0.9	128.6
օդային տրանսպորտով	447.8	92.6	97.0	136.6
էլեկտրատրանսպորտով	60.0	89.8	7.1	106.0

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2003թ. հունվար-օգոստոսին ճանապարհատրանսպորտային պատահարները 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ աճել է 5.6%-ով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2003թ. հունվար-օգոստոս	2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. օգոստոս	2003թ. օգոստոսը 2003թ. հուլիսի նկատմամբ, %
Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհանենը	603	105.6	115	98.3
Զոհվել են, մարդ	151	130.2	32	106.7
Վիրավորվել են, մարդ	782	112.4	159	104.6